ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

«ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/43» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան **« 10 » « հոկտեմբերի » 2018թ.**
ժամը 10:00

Մասնակցում էին՝

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)	Ռ.Զոբանյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Մ.Այդինյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Է.Միերյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Հ.Հովհաննիսյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Ա.Փաշայան
Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ)	Լ.Զոհրաբյան

1. «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/43» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստի անցկացման վայրը, օրը և ժամը.

(Ռ.Զոբանյան)

1.1. «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/43» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստը կայացել է 2018 թվականի հոկտեմբերի 10-ին, ժամը 10:00-ին, ք.Երևան, Կառավարության 3 շենք, 5-րդ հարկ, բնապահպանության նախարարություն, 514 սենյակ հասցեում:

2. «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/43» ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված կարգով մասնակիցների վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը շտկելու վերաբերյալ տեղեկություններ.

2.1. Ա/Ձ «Արման Ասմանգուլյան»-ի կողմից գնահատող հանձնաժողովին ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված գրավոր տեղեկատվություն կամ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվություն չի ներկայացվել:

2.2. «Առէա պապիրուս» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում էլեկտրոնային ձևով՝ gnumner.mnp@yandex.ru էլեկտրոնային հասցեին ստացվել է գրություն (կցվում է): Գնահատող հանձնաժողովը քննարկել է գրությամբ ներկայացված հիմնավորումները և պարզաբանումները: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի №526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 18-րդ ենթակետը՝ հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում է ըստ առանձին չափաբաժինների: «Առէա պապիրուս» ՍՊԸ-ի ներկայացրած հայտով, որպես 1-ին տեղ զբաղեցրած, յուրաքանչյուր չափաբաժնի մասով հաշվարկած ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ: Ընդ որում, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված է, որ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար ՀՀ դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ: «Առէա պապիրուս» ՍՊԸ-ի ժամկետանց հարկային պարտավորությունը, ըստ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի տրամադրած տեղեկատվության, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (26.09.2018թ.) կազմել է 1000 ՀՀ դրամ: Այսպիսով, հայտով ներկայացված 2-րդ չափաբաժնով ժամկետանց հարկային պարտավորությունը «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված չափը գերազանցել է 925 ՀՀ դրամով, 4-րդ չափաբաժնով՝ 800 ՀՀ դրամով և 10-րդ չափաբաժնով՝ 450 ՀՀ դրամով: «Առէա պապիրուս» ՍՊԸ-ն ներկայացրել է ժամկետանց հարկային պարտավորության մարման և հարկային մարմնում դեբետային մնացորդների վերաբերյալ հիմնավորումներ, սակայն գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ պարտքի վճարման կամ հաշվանցման վերաբերյալ դրույթներ նախատեսված չեն:

3. Հանձնաժողովը որոշեց՝

(Ռ.Զոբանյան)

3.1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի №526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը մերժել «Ա/Ձ «Արման Ասմանգուլյան»-ի հայտը:

3.2. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի №526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման»՝

3.2.1. կարգի 32-րդ կետի 18-րդ ենթակետը մերժել «Առէա պապիրուս» ՍՊԸ-ի կողմից անհամապատասխանության շտկման վերաբերյալ «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/43» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովին ներկայացված դիմում-պարզաբանումը:

3.2.2. կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը մերժել «Առէա պապիրուս» ՍՊԸ-ի հայտը:

3.3. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի №526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը՝ փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացվել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցներին՝ չափաբաժին 2-ով «Սմարթլայն» ՍՊԸ-ին, չափաբաժին 4-ով «Բիգ Թրեյդ» ՍՊԸ-ին, չափաբաժիններ 10-ով և 16-ով Ա/Ձ «Արման Մարտիրոսյան»-ին:

3.4. Հանձնաժողովի քարտուղարին՝

3.4.1. Ծանուցել «Սմարթլայն» ՍՊԸ-ին՝ չափաբաժին 2-ով, «Բիգ Թրեյդ» ՍՊԸ-ին՝ չափաբաժին 4-ով և Ա/Ձ «Արման Մարտիրոսյան»-ին չափաբաժիններ 10-ով և 16-ով հրավերով սահմանված կարգով, երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2018 թվականի հոկտեմբերի 17-ը ներառյալ, էլեկտրոնային ձևով՝ gnumner.mnp@yandex.ru էլեկտրոնային հասցեին, ներկայացնել Հրավերի 2-րդ մասի 3.1 կետով նախատեսված փաստաթղթերը՝ Հավելված №6-ով նախատեսված գրությունը, որին կցվում է իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն Հավելված №6.1-ի:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը

(Ռ.Զոբանյան)

4.1. «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/43» ծածկագրով մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել 2018 թվականի հոկտեմբերի 18-ին, ժամը 10:00-ին՝ բնապահպանության նախարարության շենքում, հասցեն՝ ք.Երևան, Կառավարության 3 շ., 5-րդ հարկ, 514 սենյակ:

5. Նիստին ներկա հանձնաժողովի անունները և ազգանունները:

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)	Ռ. Զոբանյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Մ.Այդինյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Է.Միերյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Հ.Հովհաննիսյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Ա.Փաշայան
Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ)	Լ. Զոհրաբյան